**Արձանագրություն N 2-2**
**ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-25/7 ծածկագրով «Երևանի Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 02.04.2025թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝

Տ. Կոմիտասյան
Ա. Քոչարյան
Է. Առուստամյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա. Հյուսիսյանը

**1. Գնման ընթացակարգի մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին**

(Մ. Աղայանց)

1.1 Գնման ընթացակարգի մասնակցի՝ «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

**«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ**

Հավելված 1.2-ում 3-րդ, 7-րդ և 8-րդ տողերով որպես Ջերմագազամատակարարման և օդափոխության ճարտարագետ-նախագծող, նախահաշիվ կազմող մասնագետ և շինարարական աշխատանքների կազմակերպման մասնագետ ներկայացված է Վլադիմիր Իսպիրյանը, սակայն հրավերով նշված է, որ համապատասխան մասնագիտացումներ պահանջող աշխատանքային ռեսուրսները չեն համարվում համափոխարինելի, համափոխարինելի կարող են լինել միայն 4-րդ և 6-րդ տողերով՝ էլեկտրաէներգետիկ ճարտարագետ-նախագծող և կապի համակարգերի ճարտարագետ-նախագծող մասնագետները:

Էսքիզային նախագծում բացակայում են հրավերով պահանջվող նախագծին բնորոշ կտրվածքները:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 03.04.2025թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում շտկումներ ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկումներն անհրաժեշտ է ներկայացնել **ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-25/7** ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender5@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:*

## 2. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

2.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 07.04.2025թ. ժամը 15:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Մ. Աղայանց

Անդամ՝ ---------------------------------------- Տ. Կոմիտասյան

---------------------------------------- Ա. Քոչարյան

---------------------------------------- Է. Առուստամյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան